

**ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԸ**

ՄԻՆԱՍՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանն /ՀԳԳ/ իր հավաքածուների ծավալով հանրապետության խոշորագույն գիտական գրադարանն է, գիտական տեղեկատվության կենտրոն, որն իրականացնում է ինչպես ՀՀ ԳԱԱ, այնպես էլ ողջ հանրապետության գիտահետազոտական հիմնարկների և մասնագետների գրադարանամատենագիտական և գիտատեղեկատվական սպասարկումը:

Ի թիվս այլ կարևոր խնդիրների ՀՀԳԱԱ ՀԳԳ-ը կարևորում է թվային գրադարանի մոդուլների նախագծումը և ներդրումը, գիտատեղեկատվական ոլորտի կադրերի պատրաստումը, հայագիտական թվային շտեմարանների ձևավորումը:

Վերջին տարիներին գրադարանը լուրջ քայլեր է ձեռնարկել իր գրադարանամատենագիտական գործունեության մեջ նոր, ժամանակակից էլեկտրոնային համակարգերի ներդրման և կիրառման ուղղությամբ՝ թվային գրադարանի ձևավորման նպատակով:

ՀԳԳ-ը հանրապետության մյուս խոշոր գրադարանների հետ մասնակցում է «Հայկական միացյալ գրադարանային ավտոմատացված ցանցի» համալիր ծրագրի իրականացմանը, որի շնորհիվ ընթացքում է գրադարանի գրքային հավաքածուի էլեկտրոնային քարտարանի ստեղծումը տվյալ ցանցի շրջանակում: Ներկայումս ՀԳԳ-ի մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրված է 523512 գրադարանային միավոր:

Որպես հեռանկարային ուղղություն գրադարանը խիստ կարևորում է անցումը թղթային կրիչներից էլեկտրոնայինի: Հատուկ նշանակություն է տրվում ՀՀ ԳԱԱ գիտական ժառանգության՝ մենագրությունների, ամսագրերի, մատենաշարային և շարունակական հրատարակությունների, ինչպես և հայագիտական բացառիկ արժեք ներկայացնող հրատարակությունների թվային շտեմարանների ձևավորմանը՝ համացանցում տեղադրման և ազատ դիտման կարգավիճակով հանրությանը տրամադրելու նպատակով:

Հիմնարար գիտական գրադարանում թվայնացման գործընթացներն իրականացնելու նպատակով զգալի աշխատանք է կատարվել «Բաց կոդերով ծրագրերի» սկզբունքի հիման վրա ստեղծված մի շարք ծրագրային փաթեթների ընտրության, տեղայնացման, մշակման, տեղադրման և շահագործման ուղղությամբ, ինչի շնորհիվ ՀԳԳ-ը առանց որևէ լրացուցիչ ծախսերի դրանք ներկայումս արդյունավետ կերպով օգտագործում է թվայնացման գործընթացներում:

Զգալի աշխատանք է կատարվել հնատիպ և վաղ շրջանի գրքերի, ակադեմիական 13 անուն ամսագրերի (տպագրման առաջին տարվանից մինչ մեր օրերը) թվայնացման և գրադարանի կայք-էջում տեղադրման գործում:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը ավարտել է իր հավաքածուներում պահվող հայ հնատիպ գրքի թվայնացման աշխատանքները (225 միավոր, 96,443 թվայնացված էջ): Ավարտվել է նաև վաղ շրջանի (1801-1850 թթ.) գրքերի /418 միավոր, 173,153 էջ/ թվայնացումն ու տեղադրումը համացանցում, ընթացքում է 1851-1920 թթ. հայատառ գրքերի /485 միավոր, 94,305 էջ/ տեղադրումը համացանցում, որոնք հասանելի են գրադարանի կայք էջից:

«Հայ գիրք» շտեմարանը ինտենսիվ համալրվում է նորանոր նյութերով, նույնիսկ այնպիսի նյութերով, որոնք Հայաստանի գրադարաններում չկան:

«Հայ մամուլ» համահավաք գրացուցակը ներառում է 1794 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր երկրներում հրատարակված հայատառ հանդեսներն ու թերթերը, գրառված են նաև այլալեզու, երկլեզվյան ու բազմալեզվյան մամուլի այն վերնագրերը, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է: Այս շտեմարանում ՀԳԳ-ը մուտքագրել է 163 անուն թերթ, 344 անուն ամսագիր, ստեղծել է 15 անուն թերթի և 52 անուն ամսագրի գրացուցակ, կազմել է 769 խորագիր:

Վերը նշված շտեմարանները պարբերաբար լրացվում են նոր հրատարակված նյութերով: Պետք է նշել, որ նշված աշխատանքներն ավելի արագ և արդյունավետ են ընթանում, քանի որ ՀԳԳ ու Ազգային գրադարանը միասնաբար են իրականացնում թվայնացման հիշյալ աշխատանքները:

Հայագիտական նյութերի էլեկտրոնային տարբերակների համացանցով տարածման ապահովման, հայագիտական բովանդակությամբ բազմալեզու կայքերի ստեղծման և շահագործման ծրագրի շրջանակում ՀԳԳ-ն ծրագրավորել և իրականացրել է ԳԱԱ-ի հրատարակած հայագիտական մատենաշարային և շարունակական հրատարակությունների թվայնացումը: Արդեն իսկ ձևավորվել և տեղադրվել են համացանցում՝ 17 անուն մատենաշարային և 30 անուն շարունակական հրատարակությունների շտեմարանները, որոնք պարբերաբար լրացվում են նոր հրատարակված ընթացիկ նյութերով:

Ակադեմիական մատենաշարերի թվայնացմանը զուգահեռաբար հատուկ ուշադրություն է դարձվել հայագիտական մեծարժեք հրատարակությունների թվային շտեմարանների ստեղծման և առցանց հասանելի դարձնելու գործին: Ամբողջապես ձևավորվել և տեղադրվել են համացանցում հայ առաջին ազգագրական պարբերականների՝ «Ազգագրական հանդեսի» /1896-1916թթ., 26 հատոր/ և «Էմիսյան ազգագրական ժողովածուի» /1901-1913թթ., 9 գիրք/ թվային տարբերակները: Ավարտվել է նաև «Լուսա» գրական հանդեսի /1896-1911թթ., 80 համար/ թվային շտեմարանի ստեղծման գործընթացը:

Ստեղծվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերական հրատարակություններ՝ «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի շտեմարանները:

«Արարատ» ամսագիրը թվայնացված է ամբողջությամբ 1868ից-1919թթ., կայքում տեղադրված է 8160 հոդված, 36141 էջ: Ընթացքում է «Էջմիածին»

ամսագրի թվայնացումը, առ այսօր մուտքագրվել է 1944-ից - 1975թթ, 1989-1990, 1996, 2006-2010, 2014, ընդամենը 6847 հոդված, 23641 էջ:

Ձևավորման ընթացքում է «Մատենագիտական ցանկեր» շտեմարանը, որը ներառում է Հայ գրքի, մամուլի և ձեռագրացուցակների մատենագիտությունը: Շտեմարանում առկա է ավելի քան 100 գիրք:

Զգալի աշխատանք է տարվում համահայկական հայագիտական ուղղվածության «Հայկականք» (ARMENIACA) հանգույցի ձևավորման ուղղությամբ, որը ներառում է ԳԱԱ-ի հրատարակած հայագիտական մենագրությունների, ամսագրերի, մատենաշարային և շարունակական հրատարակությունների, ինչպես և հայագիտական հրատարակությունների թվային շտեմարաններ: «Հայկականք» հայագիտական համահայկական բազմաբնույթ շտեմարանի ձևավորումը զգալի ներդրում կլինի հայագիտական նյութերը հանրությանը հասանելի դարձնելու գործում:

ՀԳԳ-ն համագործակցել է նաև «Հայկական հանրագիտարան»-ի խմբագրության հետ, նրանց տրամադրելով «Հայկական Սովետական հանրագիտարան»-ի ամբողջական թվայնացված տարբերակը, որը որոշակի խմբագրումից հետո տեղադրվել է Wikipedia հանրագիտական հանգույցի կայք էջում:

Գրադարանը համագործակցում է «Հայկական մաթեմատիկական հանդես» և «Ֆիզիկայի հայկական հանդես» ակադեմիական էլեկտրոնային ամսագրերի խմբագրությունների հետ, աջակցելով այդ ամսագրերի հոդվածների տեղադրմանը համացանցում:

Շարունակվում են «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ», «Հիմնադիր ակադեմիկոսներ» և «ՀՀ ԳԱԱ նախագահներ» էլեկտրոնային շտեմարանների ձևավորման աշխատանքները: Արդեն իսկ թվայնացվել և գրադարանի կայք էջում տեղադրվել են 116 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ, այդ թվում ՀՀ ԳԱԱ Սփյուռքի բաժնի հետ համատեղ կազմված 40 արտասահմանյան անդամների կենսամատենագիտությունները:

Ընթացքում են «Մամուլը գիտության մասին» շտեմարանի ձևավորման ուղղությամբ աշխատանքները :

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի կայք էջից հասանելի է գրադարանի մասնագետների կողմից թարգմանված «Համընդհանուր տասնորդական դասակարգման» հայալեզու համառոտ տարբերակը, որը հնարավորություն է ընձեռում հայկական գրադարաններում դասակարգման և գրացուցակավորման աշխատանքները իրականացնել ՀՏԴ-ի հայկական տարբերակով:

Գրադարանի գործունեության արմատական արդիականացման, գրադարանամատենագիտական սպասարկման մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արդի նվաճումների և նորույթների ներդրման, ինչպես և թվայնացման համար անհրաժեշտ նորագույն սարքավորումների ձեռքբերման նպատակով ՀԳԳ-ն ակտիվորեն համագործակցում է զանազան միջազգային հաստատությունների հետ և ներգրավված է այդ հաստատությունների կողմից հովանավորվող ծրագրերում: Այդ համագործակցության շրջանակում ձեռք է բերվել I-cam մակնիշի թվայնացման ժամանակակից սարք, որը հիմնականում նախատեսված է

հնատիպ և մեծ ձևաչափի հրատարակությունների թվայնացման համար, և ավտոմատ նկարահանող Qidenus սարք՝ նախատեսված հիմնականում ամսագրերի և նոր շրջանի հրատարակությունների համար, ինչն էլ ավելի խթանեց թվայնացման գործընթացը:

Այսպիսով արդեն իսկ թվայնացվել և տեղադրվել է համացանցում. գրքեր- 4472 միավոր, 1,310,206 էջ. պարբերականներ - 103 անուն, պրակ - 20,810, 707,190 էջ:

Վերոհիշյալ շտեմարանները հասանելի են հանրությանը գրադարանի կայք էջից <http://www.flib.sci.am> ինտերնետային հասցեով:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը գիտական հրապարակումների թվային տարբերակների առաջատար ստեղծողներից մեկն է և բաց մատչելիության սկզբունքով հասանելի ամենամեծ գիտական թվային շտեմարանը Հայաստանում, տեղեկատվական և գրադարանամատենագիտական ժամանակակից չափանիշներին համապատասխան ծառայություններ տրամադրող կենտրոն, ինչը հնարավորություն է ընձեռում գիտական գրականության հարուստ և բազմազան հավաքածուները արդի պատշաճ մակարդակով ի սպաս դնելու հանրությանը:

Բանալի բառեր - թվային գրադարան, թվային շտեմարաններ, տեղեկատվություն, համացանց, տեղեկատվական միջոցներ, հայագիտություն, գիտական հանդեսներ, մատենաշարային հրատարակություններ, շարունակական հրատարակություններ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը հատուկ ուշադրություն է դարձնում ՀՀ ԳԱԱ գիտական ժառանգության՝ ամսագրերի, մենագրությունների, մատենաշարային և շարունակական հրատարակությունների, ինչպես և հայագիտական բացառիկ արժեք ներկայացնող հրատարակությունների թվային շտեմարանների ձևավորմանը՝ համացանցում տեղադրման և ազատ դիտման կարգավիճակով հանրությանը տրամադրելու նպատակով: Արդեն իսկ թվայնացվել և տեղադրվել է համացանցում. գրքեր- 4472 միավոր, էջ – 1,310,206. պարբերականներ - 103 անուն, պրակ - 20,810, էջ - 707190:

ABSTRACT

Fundamental Scientific Library of NAS of RA pays special attention to the digitization and creation of electronic databases of the scientific heritage of the NAS of RA (monographs, journals, serial publications) along with especially valuable publications on Armenian studies with a view to their placement on the Internet with open access for the scientific community. There are already digitized and placed on the Internet: Books - 4472 copies, 1,310,206 pages, periodicals - 103 titles, 20,810 issues, 707.190 pages.